Visa Airport Companion

Ուղեցույց

Visa Պրեմիում քարտապաններին Բիզնես սրահ մուտք գործելու համար տրամադրվում է 2 տարբերակ՝

- Visa Airport Companion հավելվածի միջոցով
- Visa Concierge չաթ-բոթ-ի միջոցով

Visa Airport Companion հավելվածի միջոցով Բիզնես սրահ մուտք գործելու համար անհրաժեշտ է՝

1. AppStore-ից կամ Play Market-ից ներբեռնել Visa Airport Companion հավելվածը և գրանցվել (Sign Up)՝ մուտքագրելով քարտի տվյալները և սեղմել շարունակել (Continue), որից հետո Ձեզ կգա 3DS նույնականացման կոդ, որը հավաքելով և հաստատելով (submit) կանցնեք հաջորդ քայլին:



2. Հաջորդիվ անհրաժեշտ է լրացնել Ձեր տվյալները՝ Անուն, Ազգանուն, բջջային հեռախոսահամար և էլ. փոստի հասցե, նշել, որ համաձայն եք պայմաններին (I agree) և սեղմել շարունակել (Continue): Էկրանին կբերի Ձեր բջջային համարն ու էլ փոստի հասցեն, եթե ամեն ինչ ճիշտ է, անհրաժեշտ է սեղմել «Այո» (Yes): Այնուհետև Ձեր էլ. փոստին կստանաք հաստատման կոդ, որը պետք է լրացնել և անցնել առաջ: Եվ վերջում՝ անհրաժեշտ է ստեղծել Ձեր անձնական էջի գաղտնաբառը:

Հավելվածը հնարավորություն է տալիս օգտվելու նաև օֆլայն տարբերակով, որի համար պետք է անցնել բիոմետրիկ նույնականացում և վերջ: Դուք հաջողությամբ գրանցված է:



Հավելվածի հիմնական էջում սեղմելով Explore lounges կարող եք գտնել տվյալ պահին Ձեզ մոտ գտնվող ու Ձեր քարտով հասանելի բիզնես սրահը: Սեղմելով առաջարկվող Բիզնես սրահի կամ սրահներից մեկի վրա՝ կարող եք ծանոթանալ տվյալ սրահի պայմաններին: Այնուհետև կարող եք սեղմել մուտքի հրահանգը (Walk in) և տեսնել Ձեր QR կոդը, որն անհրաժեշտ է ներկայացնել Բիզնես սրահ մտնելու համար:

Visa Concierge չաթ-բոթ-ի միջոցով Բիզնես սրահ մուտք գործելու համար անհրաժեշտ է՝

1. Բացել Visa Cncierge չաթ-բոթը Telegram, WhatsApp, Viber հավելվածներից մեկում. Բանկը ապահովում է, որ չաթ-բոթի ակտիվացման հղումն ուղարկվի ձեր հեռախոսահամարին առավելագույնը քարտի ստացումից հետո 1 շաբաթվա ընթացքում,

2. Հիմնական մենյուում ընտրել Visa Travel, այնուհետև Lounge,

3. Ստուգել Ձեր քարտի համար տվյալ ծառայության հասանելիությունը,



4. Ցանկից ընտրել ցանկալի Բիզնես սրահը,
5. Սեղմել «ստանալ թվային» հասանելիություն՝ Get a Digital membership card,
6. Այցելել բիզնես սրահ և ցուցադրել QR կոդը՝ սրահ մուտք գործելու համար: